ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Զյունաշող համայնք, հասցե գ. Զյունաշող

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20» փետրվար 2013 թվականի N 07- Ա

ԶՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զյունաշող համայնքի 2013-2016 թթ. զարգացման քառամյա ծրագիրը համաձայն հավելվածների:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գրիգորյան Լարիսա Սաշիկի			
Ծատուրյան Իշխան Միխայելի			
Հարությունյան Լեոնիդ Ապրեսի			
Մկրտումյան Նադեժդա Ալեքսանդրի			
Վարդանյան Սաշիկ Վարդանի			

Զյունաշող համայնքի ղեկավար _____ Յ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՉՅՈՒՆԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Յ.Գրիգորյանը

Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ուղղվածությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի զարգացման քառամյա միջոցների հիմնական ցուցանիշները:

Հավելված - 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված - 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ,ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյունաշող համայնքը հիմնադրվել է 1870 թ-ին, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված հայերի կողմից: Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1500-1600մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է,ձմեռը ուղեկցվում է ուժեղ բքի հասնող քամիներով: Ամռանը զով է ,լինում են չորային տարիներ , որից շատ է տուժում է գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 170 բնակիչ :Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է `

1. Երեխաներ (0-6 տ.) - 15
2. Դպրոցական(7-17 տ) - 33
3. 18-62 տարեկան - 113
4. Թոշակառուներ - 21
5.Հաշմանդամներ -7
6. Աշխատունակներ - 108

Գյուղն ունի 53 ծուխ, որոնցից 6 –ը ընդգրկված են <<Փարոսի>> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի գյուղապետի կողմից , որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

. տեղակալ - 1 դրույք
. աշխատակազմի քարտուղար - 1 դրույք
. առաջատար մասնագեք (հաշվապահ) -1 դրույք
. հավաքարար - 1 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 5 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանցը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով տես հավելված 2 `

. ակումբի շենք - 1 միավոր վերանորոգման
.գյուղապետարանի շենք - 1 միավոր վերանորոգման
. գրադարան - 1 մշակույթի տան շենքում
. բուժկետ - 1 տեղավորված է մշակութի տան շենքում
. խմելու ջրի ցանց - կառ. 1975 թ-ին և բերանորոգման
. ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
. գյուղ տեխնիկա և գործիքներ

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը 13 կմ կառուցվել է 1975 թ-ին ,վերանորոգվել է 2 կմ. 2008 թ-ին ,սակայն մաշվածության պատճառով հաճախ խմելու ջրի կորուստներ են լինում: Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի : Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 15 կմ ճանապարհ ն փողոցներ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 85 առանձնատուն, 17 հազ .քմ. տարածքով: Կան բազմաթիվ կիսաքանդ շենքեր ,որոնք տանտերերի բացակայությամ պատճառով չեն վերանորոգվում :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

. Համայնքի վարչական տարածքը - 1693,3 հա , որից
. Վարելահողեր - 426 հա
. Խոտհարք - 737 հա
. Արոտավայրեր - 237 հա գյուղամերձ
. Անօգտագործելի հողեր - 28,7 հա
. Դաշտային ճանապարհներ - 14, 4 հա
. Գերեզմանոց - 8,0 հա
. Անտառային ֆոնդի հողեր -150 հա
. Ջրային ֆոնդի հողեր -6,8 հա
. Տնամերձ հողեր -70 հա
.Դպրոց - 1 հա
. Գյուղամիջյան փողոցներ - 15 հա
. Վարձակալական -240,602 հա
. Սեփականաշնորհված հողեր - 703,043 հա
. Մեկ հողաբաժնի չափը - 4,2 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հիմնականում զբաղված է անասնապահությամբ, արտարում են կաթ, միս, ձու, բուրդ: Մարզկենտրոնից գտնվելու և ավտոտրանսպորտի բացակայության պատճառով գյուղ. մթերքներ արտադրողները չեն կարոլանում պատշաճ գներով իրացնել իրենց արտադրանքը:

Երաշտի տարիներին անասնապահության բնագավարում մեծ դժվարություններ են առաջանում խոտի և խտացրած կետի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրայիին շրջանի կազմակերպումը:

Համայնքիում մասամբ զբաղվում են կարտուֆիլի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 50/60 տոկոսը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց , որը վերանորոգման կարիք ունի : Դպրոցում սովորում են 36 աշակերտներ: Դպրոցն ունի 20 աշխատողներ ,այդ թվում ՝ 10 ուսուցիչ:

ՄՇԱԿՈՒՅԹ ,ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն , որը վերանորոգման կարիք ունի : Գրադարանը գտնվում է մշակույթի տան շենքում , անմիխիթար վիճակում է, ունի 2136 գիրք:

Սպորտահրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը սպորտային խաղերը կազմակերպում է դպրոցի մարզասրահում , որը զուրկ է անհրաժեշտ գույքից:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժկետ, որը տեղադրված է մշակույթի տան շենքում : Չկա համապատասխան գույք և սարքավորում : Բուժկետն ունի մեկ աշխատող :

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

. Համայնքն ունի 8 ԲՈՒՀ –ի շրջանավարտ, տարբեր մասնագիտությունների,որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության աշխատանքները:

. Համայնքն ունի 2883,3 հա հող ,որը պարարտացման դեպքում կապահովի լավ բերք և խոտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

. Ճանապարհների անմխիթար վիճակը
. Ծնելիության նվազում `կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
. Անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով գյուղացու եկամուտների ցածր մակարդակը
. Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
. Գործազրկություն
. Համայնքի հողերի թույլ բերրիությունը
. Տրանսպորտի բացակայությունը
. Գազի բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

. Մեծ աշխատուժի առկայություն
. Մեծ քանակությամբ ջրի ամբարման հնարավորություն
. Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կանխելու համար(
. Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը
. Հորդառատ անձրևների պատճառով որոշ հողերի ճահճացումը

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

. Ռազմավարությունը
Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի Բնակչության սոցիալ –տնտեսական , մշակույթային և հանգստի պայմանները , գյուղը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:
Բարեփոխումներ կատարելով , նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝
. Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
. Համայնքն 100 տոկոսով ապահովել շուրջօրյա խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները
.Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հագիստը աշխատանքից ազատ ժամերին
. Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը

3.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՄԲԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՊԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են `
Խնդիր 1
. Մինչև 2013 թ. մայիսի 1-ը իրականացնել համայնքի ակումբի շենքի վերանորոգման ծրագիրը
. Համայնքը կունենա նորմալ ակումբ :

ԾՐԱԳՐԻՑ ԱՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

. Իրականացնել այս ծրագիրը , համայնքը կունենա նորմալ ակումբ :

ԾՐԱԳԻՐ 2
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են `
ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝
Խնդիր 1
. Մինչև 2013 թ. նոյեմբերի 1-ը մշակել համայնքի խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգման ծրագիրը , որի ընդհանուր արժեքը գնահատված է մոտ 9,0 միլիոն դրամ և ներկայացնել Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամին:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2
. Մինչև 2013 թ-ի նոյեմբերի 1-ը հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին.կազմակերպությունը՝ համագործակցելով Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի հետ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 3

. Վերանորոգման աշխատանքները սկսելու համար մինչև 2014թ. հունվարի 1-ը ապահովել համայնքի կողմից պահանջվող 10 տոկոսը ներդրումը՝ հանգանակություններ կատարելով համայնքի բնակիչներից:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝
.ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին ,
. Վերացնել փողոցների ջրափոսերը
. բարելավել շրջկենտրոնների և հարևան գյուղերի հետ հարաբերությունները՝ կապված ապրանքափոխանակության հետ:

Ծրագրի խնդիրներ՝

Խնդիր 2
. Մինչև 2014 թ. ապրիլի 1-ը մշակել և ներկայացնել Հայաստանի Սոցիալական Ներդրումներ հիմնադրամին ներհամայնքային և արտաքին ճանապարհների բարեկարգման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը գնահատված է մոտ 20.0 միլիոն դրամ : Ներհամայքային և արտաքին ճանապարհների ընդհանուր երկարությունը 15—կմ է, որից 5 կմ կենտրոնական ճանապարհն է:

Խնդիր 2
. Մինչև 2014 թ. ապրիլի 1-ը ապահովել համայնքի կողմից պահանջվող գումարը :

ԾՐԱԳՐԻՑ ԱՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

. Իրականացնել այս ծրագիրը , անխափան կաշխատեն տրանսպորտային միջոջները տարվա բոլոր եղանակներին:
. Կբարելավվի ապրանքափոխանակությունը հարևան գյուղերի հետ, որից կբարելավվի գյուղացու սոցիալ –տնտեսական վիճակը:

ԾՐԱԳԻՐ 4
ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է `

. ներգրավել համայնքի ազատ աշխատանքին
. ապահովել համայնքը գազով

Ծրագրի խնդիրներ

Խնդիր 1

.Մինչև 2015 թ. մարտի 1-ը մշակել ծրագիր, 5 կմ երկարության ճանապարհ , որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 80 միլիոն դրամ և ներկայացնել Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամին:

Պատասխանատու `համայնքի ղեկավար

Խնդիր 2

. Մինչև 2015 թ. մարտի 1-ը հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող շին կազմակերպությունը՝ համագործակցելով Հայաստանի Ներդրումների Հիմնադրամի

Պատասխանատու `համայնքի ղեկավար

ԾՐԱԳՐԻՑ ԱՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

. Իրականացնել այս ծրագիրը, համայնքի բնակիչները ապահովված կլինեն գազով
. Կբարելավվի բնակչության սոցիալ –տնտեսական վիճակը:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է `
. Համայնքը կունենա նորմալ դպրոց:
. Աշակերտները հաճույքով կհաճախեն դպրոց:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիր 1

. Մինչև 2015 նոյեմբերի 1-ը մշակել համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման ծրագիրը , որի ընդհանուր արժեքը կազմում է 80 միլիան դրամ և ներկայացնել Հայաս – տանի Սոցիալական Հիմնադրամի:

Խնդիր 2

. Մինչև 2015 թ. նոյեմբերի 1-ը վերանորոգել համայնքի միջնակարգ դպրոցը 2000 քմ ,16 դասասենյակ , 2 միջանցք:

ԾՐԱԳՐԻՑ ԱՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

. Իրականացնելով այս ծրագիրը , աշակերտները նորմալ կերպով կհաճախեն դպրոց:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի կոկրետ ծրագրի իրականացման համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Զյունաշող համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

	Եկամուտի տեսակը	2011 թ փաստ.	2012 թ. փաստ.	2013 թ. փաստ.	2014 թ կանխա տեսում	2015 թ. կանխա-տեսում
Ա	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	3956,3	5454,1	9462,6	7010,0	7010,0
1	Հողի հարկ	1347,6	1092,5	4092,9	2107,0	2107,0
2	Գույքահարկ	32,4	71,3	162,5	162,5	162,2
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկ եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	5,0	8,0			
Գ	Ոչ հարկ. եկամուտներ					
1	Պետ. պահուստային Հողերի վարձավճարներ	808,8	213,6	1707,2	1240,5	1240,5
2	Գույքի վարձավճարներ					
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկ եկամուտ					
Դ	Պաշտոնական տրան սֆրտներ, դոտացիա	3500,0	3500,0	3500,0	3500,0	3500,0
Ե	Եկամուտների կապիտալի գործառությունից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	444,1	111,1	553,6	500,0	500,0
Է	սուբվենցիա					

Հավելված 1

ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հավելված 2

ՉՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

1. Գյուղապետարանի շենք	-1 միավոր
2. Մշակույթի տուն	- 1 միավոր
3.Գրադարան	-1 միավոր (մշակույթի տան շենքում)
4. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	-15 կմ
5. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	-10 կմ
6. Ներհամայնքային ճանապարհներ	-10 կմ
7. Ներտնտեսային ոռոգման համակարգ	-0 միավոր
8 Հուշարձան	-0 միավոր
9. Հանգստի գոտիներ	-0 միավոր
10. Գյուղ . տեխնիկա և գործիքներ	-6 միավոր
11.Գերեզմանատուն	-1միավոր

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2012թ. փաս	2013 թ. փաս	2014 թ. Կանխ.	2015 թ. Կանխ.
1	Համայնքի տարածքը	Հա	1693,9	1693,9	1693,9	1693,9
2	Բնակչության թիվը	մարդ	189	170	180	190
3	Ծնունդը	մարդ	1	2	4	5
4	Մահացությունը	մարդ	1	1	1	1
5	Աշխ ռեսուրսները, այդ թվում	մարդ	170	160	175	180
	Ա) զբաղվածությունը ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	32	33	35	35
6	Գործազրկության մակարդակը	տոկոսը	87,1	87,1	86,1	86,1
7	Առնտրի և հասարա՝կա կան սննդի օբյեկտի թիվը	հատ				
8	Պահուստային հողեր	հա	240,602	240,602	240,602	240,602
9	Պահուստային հողերի օգտագործման մակար.	Տոկ	-	-	-	-
10	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	13	13	13	13
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկար.	կմ	-	-	-	-
12	Որոգման համակարգի տակ ընկած հողեր	Հա				
13	Ներհամայնքային փողոցների և ճանապ.երկարությունը	կմ	15	15	15	15
14	Չբարեկարգման փողոցների և ճանապահ	կմ	15	15	15	15
15	Մասնավոր բնակ .ֆոնդ	Հազ.քմ	17	17	17	17
16	Սովորողների թիվը	մարդ	42	36	40	40
17	Գյուղապետարանը և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	5	5	5	5